ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ՊԳԿԿ-2017-ՇՀԾՁԲ-15/3>>

<< 26 >> 04 2017

ք. Երևան

<< ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունը, ի դեմս Վարչության աշխատակազմի ղեկավար Վ.Հարությունյանի, որը գործում է Վարչության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ.Բաղդասարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի և N 1.1 հավելվածով սահմանված գնացուցակի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին և N 1.1 հավելվածով սահմանված գնացուցակին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը

Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կնքվի համաձայնագիր:*

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն	«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրան Մեծի 4	ք.Երևան, Մյասնիկյան 22/4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՎ 900011145027	ՀՎ 22008333501200
ՀԿՀՀ 02528489	ՀԿՀՀ 08417828
Վ.Հարությունյան	Վ.Բաղդասարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
<< 26 >> 04 2017 թ. կնքված
N <<ՊԳԿԿ-2017-ՇՀՇՁԲ-15/3>> ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր	
Տոյոտա Քեմրի 2.5, 2007 թ., Տոյոտա Քեմրի 2.4, 2013 թ., Տոյոտա Քորոլլա 2010թ., Վոլցվագեն Բոռա 2004 թ. ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում՝ անհրաժեշտության առաջացման դեպքում:	
Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից	2017թ. դեկտեմբերի 20-ը

* Կատարողը ծառայությունները մատուցում է իր գործունեության վայրում, իսկ ծառայության արդյունքը հանձնում ք.Երևան, Տիգրան Մեծի 4 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
ՀՎՀ 900011145027
ՀԿՀՀ 02528489

Վ.Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք.Երևան, Նյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՎՀ 220083335012000
ՀԿՀՀ 08417829

Վ.Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 1.1
<< 26 >> 04 2017 թ. կնքված
N <<ՊԳԿԿ-2017-ՇՀԾՁԲ-15/3>> ծածկագրով գնման պայմանագրի

ԳՆԱՑՈՒՑԱԿ

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման՝ SU-1 (տեխնիկական գննման /դիագնոստիկա/), SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի

SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները /տեսակները/ ըստ չափաբաժինների
	1 չափաբաժին
	Արտասահմանյան արտադրության ա/մ TOYOTA CAMRY 2007թ., Տոյոտա Քեմրի 2.4, 2013 թ., TOYOTA COROLLA 2010թ, VOLKSWAGEN BORA 2004 թ)
2	3
SU-1 ներառվող ծառայությունների անվանում	
Սառեցման համակարգի ստուգում	100
Յուղման համակարգի ստուգում	100
Արտացման համակարգի ստուգում	100
ՓՏ-ի աշխատանքի ստուգում	100
ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	100
Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	100
Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	100
Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	100
Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	100
Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	100
ABS համակարգի ստուգում	100
էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	100
Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	100
Թափքի վիճակի ստուգում	100
Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	100
SU-2 ներառվող ծառայությունների անվանում	
Շարժիչի հանում և տեղադրում	25000
Նույնը կոնդիցիոների դեպքում	100
Նույնը ԱՓՏ-ի դեպքում	45000
Շարժիչի վերանորոգում	55000
Նույնը V6-ի դեպքում	100
Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	8000
Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	8000
Նույնը աջի համար (V6)	100
Նույնը ձախի համար (V6)	100
Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	25000
Նույնը աջի համար (V6)	10000
Նույնը ձախի համար (V6)	25000
Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	10000
Շարժիչի գլխիկի վերանորոգում	10000
Փականի խցուկի փոխարինում	100
Նույնը V6-ի դեպքում	13000
Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	10000
Նույնը V6-ի ձախի դեպքում	100
Նույնը V6-ի աջի դեպքում	25000

Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	100
Հրիչների փոխարինում SOHC	16000
Ատամնավոր փոկի փոխարինում	15000
Նույնը V6-ի դեպքում	100
Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	10000
Նույնը կոնդիցիոների դեպքում	100
Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	25000
Նույնը ԱՓՏ-ի դեպքում	100
Մխոցային օղակների փոխարինում	15000
Նույնը DOHC դեպքում	100
Նույնը V6-ի դեպքում	3000
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
Յուղի և յուղի զտիչի փոխարինում	2000
Յուղի պոմպի փոխարինում	1000
Նույնը V6-ի դեպքում	100
Ղեկավարման բլոկի վերանորոգում	25000
Օդի զտիչի փոխարինում	1000
Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	5000
Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	16000
Բենզանոիչի փոխարինում	9000
Վառելիքի զտիչի փոխարինում	3000
Տրամյորի վերանորոգում	100
3. Սառեցման և արտածման համակարգ	
Հովհարի փոկի հանում և տեղադրում	500
Հովհարի հանում և տեղադրում	3000
Ռադիատորի հանում և տեղադրում	8000
Նույնը կոնդիցիոների դեպքում	100
Նույնը ԱՓՏ-ի դեպքում	100
Ռադիատորի վերանորոգում	45000
Թերմոստատի փոխարինում	6000
Ջրի պոմպի փոխարինում	15000
Նույնը կոնդիցիոների դեպքում	100
Ջրի պոմպի վերանորոգում	100
Նույնը կոնդիցիոների դեպքում	100
Ընդարձակող բաքի փոխարինում	2000
Խլարարի հանում և տեղադրում	3500
Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	1000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	4500
Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	100
ՓՏ-ի հանում և տեղադրում	10000
ՓՏ-ի վերանորոգում	15000
ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	1000
ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	1000
Վագքաչափի շարժաբերի փոխարինում	100
ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	25000
ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	75000
Նույնը V6-ի համար	100
ԱՓՏ-ի հանում և տեղադրում	45000
Նույնը V6-ի համար	100
ԱՓՏ-ի վերանորոգում	120000
Նույնը V6-ի համար	100
ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	13500
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	100
Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	100
Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	100

Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	100
Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով	100
Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	100
Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում	100
6. Առջևի և հետևի կամրջակներ	
Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	100
Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում	100
Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	100
Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում	100
Կիսասռնու առանցքակալի փոխարինում	100
7. Կախոց	
Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	15000
Տրավերսի հանում և տեղադրում	4500
Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	6000
Անվակունդի առանցքակալի փոխարինում	8000
Նույնը հետին տանող ա/մ-երի համար	100
Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	8000
Նույնը հետին տանող ա/մ-երի համար	100
Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	3500
Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	2000
Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	7500
Զսպանակի հանում և տեղադրում	2500
Զսպակի հանում և տեղադրում	
Զսպակի վռանների փոխարինում	
Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	7500
Ներքևի լծակի հանում և տեղադրում	4500
Ներքևի լծակի վռանների փոխարինում	1500
Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	3500
Միջին ձգանի հանում և տեղադրում	100
Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	100
Վերևի լծակի հանում և տեղադրում	100
Վերևի լծակի վռանների փոխարինում	100
Գնդե հոդակապերի փոխարինում	7000
Ծայրակալների հանում և տեղադրում	4000
Առջևի կայունարարի հանում և տեղադրում	3000
Առջևի կայունարարի վռանների փոխարինում	3500
Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	100
Հետևի զսպանակի փոխարինում	3500
Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	7000
Հետևի ձգածողի հանում և տեղադրում	2500
Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	2000
Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	4000
Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	

Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	
Անվաբացքի կարագավորում	5000
Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար	3000
8. Ղեկային մեխանիզմ	
Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	15000
Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	3500
Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	8000
Նույնը կոնդիցիոների դեպքում	100
ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	100
ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	100
9. Արգելակային համակարգ	
Գլխ. գլանի հանում և տեղադրում	3000
Գլխ. գլանի վերանորոգում	100
Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	6000
Բանվ. գլանի հանում և տեղադրում	100
Բանվ. գլանի վերանորոգում	100
Արգելակային համակարգի օդահանում	1000
Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	2000
Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	2000
Առջևի սուպպորտի վերանորոգում	100
Հետևի սուպպորտի վերանորոգում	100
Արգելակային փողրակի փոխարինում	4000
Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	4000
Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	5000
Հետևի կոճղակների փոխարինում	1000
Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	5000
Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	5000
Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	1000
ABS-ի հանում և տեղադրում	10000
ABS-ի վերանորոգում	8000
Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	4500
Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	1000
10. Էլեկտրասարքավորում	
Էլեկտրասարքավորման վերանորոգում	25000
Չափիչ սարքերի հանում և տեղադրում	500
Գեներատորի հանում և տեղադրում	8000
Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	100
Գեներատորի վերանորոգում	12500
Մեկնարկիչի հանում և տեղադրում	8000
Մեկնարկիչի վերանորոգում	13500
Առջևի լապտերի հանում և տեղադրում	1000
Հետևի լապտերի հանում և տեղադրում	1000
Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	10000
Վազքաչափի հանում և տեղադրում	500
Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	100
Սաքերի պանելի հանում և տեղադրում	500
Արագաչափի հանում և տեղադրում	1000
Ազդանշանի հանում և տեղադրում	3000
Ապակեվացիչի շարժիչի հանում և տեղադրում	4000

Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	7000
Վառոցքային լարերի հանում և տեղադրում	10000
էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	500
էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում	10000
էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում	10000
Էլեկտրական տվիչների փոխարինում	3500
Էլեկտրական անջատիչների փոխարինում	3000
Վառոցքի մոմերի փոխարինում	10000
Կոնդիցիոների լիցքավորում	25000
Կոնդիցիոների վերանորոգում	15000
11. Այլ ծառայություններ	
Անիվի հանում և տեղադրում	1000
Անվադողի վերանորոգում	1500
Անիվի բալանսավորում	1000
Անիվի վալց	2000
Ընդամենը ծառայություններ	**1211200**
SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	
1. Շարժիչ	
Շարժիչի բլոկ	30000
Շարժիչի գլխիկ	20000
Բարձիկ	40000
Շարժիչի գլխիկի միջադիր	25000
Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	5000
Շարժիչի բաշխիչ լիսեռ	1000
Շարժիչի փական դուրս մղող	5000
Շարժիչի փական ներս մղող	5000
Շարժիչի փականի խցուկ	2000
Ծնկաձև լիսեռ	1000
Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	10000
Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	15000
Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	15000
Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	15000
Հենակային տափողակ	1000
Մխոց	15000
Մխոցային օղակներ	25000
Ատամնանիվ	1000
Ատամնավոր փոկ	25000
Շղթա	
Հիդրոծգան	10000
Հրիչ	8000
Հիդրոհրիչ	10000
Բաշմակ	1000
Հանգստարար	8000
Թափանիվ	500
Թափանիվի պսակ	500
Խցուկ բաշխիչ լիսեռի	7000
Շկիվ	500
Շարժաթև	500
Կարտերի միջադիր	5000
Միջադիր	4000
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	2500
Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	4000

Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	6000
Յուղի զտիչ	8000
Յուղի պոմպ	1000
Յուղի պոմպի շարժաբեր	100
Յուղի ռադիատոր	100
Յուղի փողրակ	100
Յուղի ծորակ	100
Վառոցքի մոմ	7500
Ինժեկտորի ֆորսունկա	1000
Վառելանյութի մղիչ էլեկտրական	45000
Վառելանյութի զտիչ	15000
Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման	100
Վառելանյութի փողրակ	4500
Աքսելերատորի ճոպան	2000
Օդի զտիչ	13000
Ջերմաստիճանային տվիչ	500
Յուղի տվիչ	2000
Բաշխիչ լիսեռի տվիչ	2000
Օդի ծախսի տվիչ	10000
Արագաչափի տվիչ	2000
Հովհարի տվիչ	2000
Զրի տվիչ	1000
Բենզոբաքի տվիչ	5000
Մարման ընթացքի կարգավորիչ	100
Մարման ընթացքի տվիչ	100
Ղեկավարման համակարգիչ	25000
Պարապ ընթացքի տվիչ	100
Դրոսելային փականի տվիչ	1000
Թթվածնի տվիչ	100
3. Սառեցման և արտածման համակարգ	
Հովհարի փոկ	100
Հովհար	5000
Ռադիատոր	85000
Ընդարձակող բաք	5000
Ռադիատորի փողրակ	7500
Թերմոստատ	15000
Զրի պոմպ	45000
Զրի պոմպի առանցքակալ	100
Զրի պոմպի թևակ	100
Սառեցման հեղուկ 1 լիտր	2000
Զրի պոմպի սռնանիվ	100
Հոլովակ	1000
Փոկ	17500
Փոկ կոնդիցիոների	100
Ծորակ	100
Խլարարի ներդիր	1000
Խլարարի կախոց	500
Անուր (Խամուտ)	500
Խլարար	5000
Ռեզոնատոր	5000
Վառարանի ռադիատոր	45000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
Փոխանցման տուփ	95000
ՓՏ-ի առջևի խցուկ	3500
ՓՏ-ի հետևի խցուկ	3500
ՓՏ-ի առանցքակալ	5000
ՓՏ-ի առաջնային լիսեռ	10000
ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	10000
ՓՏ-ի եղանիկ	7500

ՓՏ-ի ատամնանիվ	5000
Համաժամիչ	4000
Մուֆտ	6500
ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	100
ԱՓՏ-ի զտիչ	22000
ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	
ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	
Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	4500
ԱՓՏ յուղ, 1 լիտր	7500
ՓՏ-ի առաջնային լիսեռ	100
Հերմետիկ	2250
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
Բաշխիչ տուփ	100
Բաշխիչ տուփի խցուկ	100
Բաշխիչ տուփի առանցքակալ	100
Բաշխիչ տուփի ատամնանիվ	100
Բաշխիչ տուփի լիսեռ	100
Կարդանային լիսեռ	100
Էլաստիկ մուֆտ	100
Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	100
Կարդանային լիսեռի խաչուկ	100
6. Առջևի և հետևի կամրջակներ	
Հետևի կամ առջևի կամրջակ	100
Ռեդուկտոր	100
Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	100
Դիֆֆերենցիալ	100
Դիֆֆերենցիալի սատելլիտ	100
Տանող ատամնանիվի խցուկ	100
Տանող ատամնանիվի առանցքակալ	100
Դիֆֆերենցիալի առանցքակալ	100
Կիսաառնի	100
Կիսաառնու առանցքակալ	100
Կիսաառնու միջադիր	100
Կիսաառնու խցուկ	100
Կարգավորիչ տափողակ	100
7. Կախոց	
Տրավերս	1000
Կրոնշտեյն	1000
Ձախ կամ աջ հոդակապ	70000
Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	15000
Անվակունդ	45000
Անվակունդի խցուկ	3000
Անվակունդի ներքին առանցքակալ	30000
Անվակունդի արտաքին առանցքակալ	100
Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	28000
Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	100
Ձախ կամ աջ հոդակապի խցուկ	5000
Հարվածամեղմիչի թասակ	25000
Ձսպանակ	500
Առջևի հարվածամեղմիչ	75000
Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	1000
Հարվածամեղմիչի վռան	1000
Ներքևի լծակ	25000
Ներքևի լծակի վռան	6000
Վերևի լծակ	100
Վերևի լծակի վռան	100
Գնդե հոդակապ	19000
Առջևի կայունարար	15000

Առջևի կայունարարի վռան	7500
Առջևի կայունարարի առջևի վռան	100
Հետևի զսպանակ	1000
Հետևի ցնցամեղմիչ	45000
Հետևի մետաղաձող (շտանգա)	1000
Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	1000
Հետևի անկյունագծային լծակ	1000
Անկյունագծային լծակի վռան	1000
Զսպակ (ռեսսորա)	
Աջ կամ ձախ ձգան	15500
Ծայրակալ	15000
Ձգան մեջտեղի	100
Անվահեծ	1000
8. Ղեկային մեխանիզմ	
Ղեկային կալուն	100
Ղեկային կալունի առանցքակալ	100
Ղեկային կալունի խաչուկ	100
Հիդրոուժեղարար	100
Հիդրոուժեղարարի փոկ	100
Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	20000
Հիդրոուժեղարարի պոմպ	100
Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	100
Ղեկային ձող	100
Ղեկային ձողի ծայրակալ	100
Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	5000
Ճոճանակ	100
Ճոճանակի վռան	100
7. Արգելակային համակարգ	
Գլխ. գլան	12000
Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	100
Վակուումային ուժեղարար	1000
Բանվ. գլան	100
Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	100
Արգելակային փողրակ	5000
Սուպորտի ուղղորդիչ	2500
Սուպորտի մանժետ	100
Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	34500
Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	31500
Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	100
Առջևի արգելակային սկավառակ	20000
Հետևի արգելակային սկավառակ	20000
Ձեռքի արգելակի ճոպան	4580
ABS-ի տվիչ	15000
Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	3500
Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	2000
Ձեռքի արգելակի ճոպան	100
9. Էլեկտրասարքավորում	
Գեներատոր	95000
Գեներատորի դիոդային կամրջակ	2000
Գեներատորի ռելե	15000
Գեներատորի առանցքակալ	7500
Ստարտեր	80000
Ստարտերի ռելե	5000
Ստարտերի ածուխ	5000
Բենդեքս	25000
Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	15500
Առջևի լապտեր	1000
Առջևի թարթիչ	100

Հետևի լապտեր	100
Հետևի թարթիչ	100
Արգելակային լապտեր	15000
Լամպ	8000
Էլեկտրական անջատիչ	1000
Էլեկտրական տվիչ	1000
Էլեկտրական չափիչ սարք	500
Բռնկման կողպեք	13000
Էլեկտրալարերի գլխավոր խուրց	1000
Էլեկտրալարերի երկրորդային խուրց	1000
Վառոցքային լարերի խուրց	25000
Վառոցքի մոմի ծայրակալ	8000
Վազքաչափ	500
Վազքաչափի ճոպան	
Արագաչափ	9300
Ազդանշան	3000
Ապակելվացիչ	3000
Ապակելվացիչի շարժիչ	15000
Դռների կենտրոնական փական	15000
Ազդանշանային համակարգ	10000
Մագնիտոլա	500
Էլեկտրաամբարձիչ	15000
Էլեկտրաամբարձիչի շարժիչ	15000
Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր համար	4000
Ընդամենը պահեստամասեր, քսայուղեր և այլ օժանդակ նյութեր	**1949630**
Ընդամենը	**3160830**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
հ/հ 900011145027
ՀՎՀՀ 02528489

Վ.Հարությունյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք.Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
հ/հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

Վ.Բաղդասարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
<<26>> 04 2017 թ. կնքված
N <<ՊԳԿԿ-2017-ՇՀԾՁԲ-15/3>> ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ					350000	350000	600000	600000	600000	1000000	1000000	1000000	1000000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900011145027
ՀՎՀՀ 02528489

Վ.Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք.Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

Վ.Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
<<26>> 04 2017 թ. կնքված
N <<ՊԳԿԿ-2017-ՇՀԾՁԲ-15/3>> ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք.Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

Պատվիրատու
ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
ՀՀ 900011145027
ՀՎՀՀ 02528489

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱԿԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

§ ¦§ ¦ 2017Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **«Պետության կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման» պետական գնման պայմանագիր**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2017 թ.
Պայմանագրի համարը՝ <<ՊԳԿԿ-2017-ՇՀԾՁԲ-15/3>>
Պատվիրատուն՝ ի դեմս Կարչության աշխատակազմի տնտեսական բաժնի պետ՝ Ռ.Արշակյանի և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի տնօրեն Վ.Բաղդասարյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
<<26 >> 04 2017 թ. կնքված
N<<ՊԳԿԿ-2017-ԾՀԾՁԲ-15/3>> ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ << ԿԱ պետական գույքի կառավարման վարչության (այսուհետ՝ Պատվիրատու) և

----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն